ստացած Սմբատի եղբայրը, Խաչենի իշխաններից Հասան Ջալալ Ռաուլէն, Դոփեան Հասանը՝ ատեանի մէջ այնպէս ընդունելի, ինչպէս Քրիստոսի խաչը բեմի վերայ(*).

Աւաղ թէ զորն ասեմ ի լալի
Զայն հին ու նորն ի գերեզմանի.
Վայ զմնացորդս սուտ կենդանի
Մակար չէաք ծնեալ յաշխարհի.
Արդ զերեցաք ու խիստ արժանի,
Մեր զերեզարձն չեն ի միջի։
Աւղնեա մեզ ի նեղութեան մերում Աստուած, աղաչեմք։

Մենք արդէն որոշել ենք այս գրութեան ծագման terminus post quem-ը եւ terminus ante quem-ը Պռոշի երկու որդիների մահուան տարիներով՝ Ամիր Հասանի ✻ 1292 թուին և Պապաքի ✻ 1298/9. Ողբի մէջ յիշուած է միայն առաջնի անունը և նա մեռած իշխանների մէջ վերջինն է, որոնց մահը ողբում է հեղինակը։ Կենդանի իշխաններին, որոնց մէջն է և Պապաքը, չէ յիշում(**)։ Բայց կարող ենք աւելի սեղմել և գրեթէ ճշգութեամբ որոշել գրութեան տարին. ժամանակի այն նկարագրութիւնը, որ տալիս է հեղինակը համապատասխան է միայն 1294/5 թուականին, Նաւռուզի կատարած չարիքներին(***)։ Այդ ժամանակին համապատասխան է և «Զհովիւ հաւտին բամբասեցաք» արտայայտութիւնը, որ իրաւամբ Անաւարզեցու հետ կապեցինք։ Վերջինս ՁԽԲ թուի առաջին կիսում դեռ եւս եպիսկոպոս է յիշւում(****), իսկ Օրբէլեանը նորա կաթողիկոսութիւնը նոյն թուականին է նշանակում, ասել է, մօտաւորապէս, երկրորդ կիսում։ Երկու տարի յետոյ միայն՝ Մռազատկի առթիւ՝ արեւելեան Հայաստանում պարզւում է նոր կաթուղիկոսի բռնած գայթակղեցուցիչ դիրքը(*****) և առիթ դառնում Օրբէլեանի ժողովական թղթի գրութեան. մինչ այդ կաթողիկոսի հասցէին եղած խօսակցութիւնը կարող էր ոմանց կողմից «բամբասանք» համարուել, ինչպէս և Խաչատուր Կեչառեցու։ Այսպիսով Ողբի ծագումը հաստատուն կերպով կարող ենք 1294/5 թուին նշանակել. ժողովից յետոյ Կեչառեցին եւս համակարծիք է Օրբէլեանին եւ նորա բարեկամն ու հիւրն է ՁԽԲ թուականից առաջ։

Գանձարանների յիշատակարանների մէջ, որպէս հնագոյն գանձասացներ և տաղասացներ Գրիգոր Նարեկացու և Ներսէս Կլայեցու հետ յիշւում են «տր. Մխիթար Այրիվանեցին եւ Խաչատուր Կեչառեցին». այդպիսի յիշատակարանով Գանձարաններից մեզ յայտնի հնագոյն և լաւագոյն օրինակներից մէկն է 1445 թուին Աղթամարի յայտնի գրիչ Մինասենց Թումայի ձեռքով գրուածը(*)։ Այդտեղ խօսք կայ նաև գրչի աւագ ժամանակակից Գրիգոր Խլաթեցու մասին (✻ 1445) որպէս վերջին գանձասացի և Գանձարանի խմբագրողի. մենք առիթ կ'ունենանք հետեւեալ գլխի մէջ պարզելու, թէ յիրաւի Խլաթեցին օգտուել է իւր խմբագրութեան համար Մխիթար Այրիվանեցու գանձերի ժողովածուից դեռ եւս 1387 թուին։ Անհաւանական չէ, ուրեմն, որ Մինասենց Թուման իւր մատենագրական տեղեկութիւնները Գանձերի հեղինակների մասին քաղած լինի Խլաթեցուց, եթէ հէնց ինքը չէ հանել գանձերի վերնագիրներից կամ տների սկզբնատառերից, «Խաչատուր» կամ «Խաչատուր Վարդապետ» սկզբնատառերով Գանձերը յատկացնելով Կեչառեցուն։ Կը դժուարանայինք առանց յատուկ և մանրամասն ուսումնասիրութեան որդեգրել յիշատակարանի և ցանկերի տեղեկութիւնը իւր ամբողջական բովանդակութեամբ, թէև անկասկած է, որ այդ Գանձերից շատերը Կեչառեցունն են, Acrostic-ից զատ՝ նրանց կազմութեան արտաքին նշաններից ու ներքին յոյզերի և արտայայտութեան ձևերից դատելով. իսկ ոմանք էլ այլ և այլ ձեռագիրներում անկախ միմեանցից վերագրուած Կեչառեցուն (Յաւել. Գ. 5)։

Բայց բարեբաղդաբար ունինք ուրիշ աւելի հիմնաւոր պատճառներ եւս տնագլուխների «Խաչատուր» սկզբնատառերով գանձերը կապելու Կեչառեցու անուան հետ։ Երևանի թանգարանի № 37/383 ձեռագիրը բաղկացած է երկու մասից. առաջինը Գանձարան է մինչև 120բ, իսկ երկրորդը Ճառընտիր՝ 121ա–398բ։ Երկու մասերը գրուած են տարբեր գրիչների կողմից. Գանձարանի գրիչն է Մարկոս կրօնաւոր (15ա), որ գրում է իսկապէս մինչեւ 109բ, իսկ 110բ–120բ վերջին թերթերը 118բ սկսած ամբողջ Ճառընտրի հետ գրել է եւ կազմել Գրիգոր քահանան Երզնկայում, ՊԺԵ (= 1366) թուին՝ Ներսէս քահանայի ստացմամբ. յիշատակարանի մէջ խնդրում է «այլ և յիշել զգանձերուն գրողն զՄարկոս կուսակրաւն քհ»։ Պարզ է,

(*) Այստեղ յիշուած իշխաններից Սաղունի եւ Սմբատ Օրբէլեանի մասին տես մեր «Զագավանից ժողովը», Շողակաթ, եր. 26/27։ Ղութլու Բուղայի մասին X. B. T. I. b. III. 252։ Հասան Ջալալի մասին Գանձ. տես ցանկը։ Դոփեան Հասանը նոյնանուն երկրորդն է նոյն տոհմից, Դոփի և Հասան Ա.ի թոռը, Գրիգոր Ա.ի որդին. նորա կինն է Մամքան՝ զուստր Վաչուտեան Քրզի և Խորիշահ Մամիկոնեանի, իսկ սրանց որդին Գրիգոր Բ., ամուսին Տարսայիճ Օրբէլեանի և Մինա Խաթունի զոտեր Ասփայի։ Հասան Բ. կենդանի էր դեռ եւս 1274 թ. (Արցախ, 405), իսկ 1289 թուին, երբ նորա որդին խաչարձան կանգնեց հոր յիշատակութեամբ հաւանական է կենդանի լինէր։ Այդ դէպքում Դոփեան Հասան Բ.ի մահը պէտք է նշանակել 1289–1294 թ.։ Ողբի մի փոքրիկ հատուածը հրատարակել է Ալիշան, Այր. 268. ամբողջը տ. Արարատ 1896, 278։ Տես և Յաւել. Գ. 1, ձեռագիրների համեմատութեամբ.

(**) Խաղբակեանք, Էջմ. 105։

(***) Օրբէլեան, 472/3։

(****) Լալայեան, Ցուց. Վասպուրականի, եր. 114։

(*****) Օրբէլեան, 446 և շար.։

(*) Այժմ Էջմ. № 831 Նժ.։